**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հոկտեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-367-12.09.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հոկտենբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1366 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-367-12.09.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է քաղաքացիական գործ քննող ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին վերապահել գործը վարչական դատարանի քննությանը հանձնելու իրավասություն՝ առաջարկվող փոփոխությունը հիմնավորելով միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերում ցուցաբերված տարբերակված մոտեցումները վերացնելու անհրաժեշտությամբ: Նշված կարգավորման անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը գնահատելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկ է համարում քննարկել պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու ինստիտուտի իրացման առանձնահատկությունները վարչական և քաղաքացիական դատավարություններում:

Այսպես, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

Վճռաբեկ դատարանը 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով կայացված որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ իրավական նորմի վերլուծությանը՝ նշել է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով վարչական արդարադատության համակարգում ապահովել դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, նախատեսել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Այսպիսով, վարչական դատարանը, կաշկանդված լինելով արդարադատության պատշաճ իրականացման և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովման կոնվենցիոն կարգավորումներով, պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՝ ոչ, և գործը վարչական դատարանին ընդդատյա չլինելու պարագայում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը կարգավորել է նաև այն դեպքը, երբ վեճը ենթակա չէ որևէ դատա-

ռանում քննության: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության: «Որևէ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրն ի նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ Հայաստանի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների քննությանը և լուծմանը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ վարչական դատավարության ցանկացած փուլում պահանջը վերահասցեագրելու իրավասությունը վարչական դատարանին վերապահելը պայմանավորված է՝

1) վարչական դատավարության էությամբ, մասնավորապես՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորմամբ, որն օժտում է դատարանին ակտիվ դերակատարությամբ՝ վերացնելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները: Այսպես, վերահասցեագրման իրավասություն չունենալու պարագայում ինքնին իմաստազրկվում է ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու իրավասության իրագործումը, եթե ներկայացվել է պահանջ, որը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով.

2) վարչական դատավարությունում հայցատեսակների դասակարգմամբ և յուրաքանչյուր հայցատեսակի համար հստակ պահանջի ձևակերպման անհրաժեշտությամբ.

3) վարչական դատարան ներկայացվող հիմնական և ածանցյալ պահանջների տարբերակման անհրաժեշտությամբ:

Առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու կապակցությամբ այլ իրավակարգավորումներ են սահմանվում գործող քաղաքացիադատավարական օրենսդրությամբ:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանը կարող է գործը հանձնել այլ դատարանի քննության, եթե այն վարույթ է ընդունվել տարածքային

ընդդատության կանոնների խախտմամբ, ընդ որում, «այլ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրն ի նկատի է ունեցել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող ընդհանուր իրավասության դատարաններին:

Նույն հոդվածի 3-րդ մասով դատարանին ընձեռվել է գործը սնանկության դատարանի քննությանը հանձնելու իրավասություն, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ սնանկության դատարանը ևս գործը քննում է քաղաքացիական դատավարությամբ սահմանված կարգով:

Հետևաբար, գործի՝ առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում դատարանն իրավասու չէ այն հանձնել այլ դատարանի քննությանը: Տվյալ պարագայում դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով: Այսինքն՝ այն դեպքում, երբ որևէ գործի քննության ընթացքում պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ, դատարանը պարտավոր է վճիռ կայացնել գործի վարույթը կարճելու մասին: Ընդ որում, նշված հոդվածի հիմքով ենթակա են կարճման ոչ միայն այն գործերը, որոնցով վեճը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանի քննությանը, այլև այն գործերը, որոնցով վեճն ընդհանրապես ենթակա չէ որևէ այլ դատարանի քննությանը: Ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրման իրավասություն չվերապահելը պայմանավորված է քաղաքացիական դատավարությունում առանցքային դեր ունեցող մրցակցության սկզբունքով:

Փաստորեն, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի, որը տարբերակված մոտեցում է դրսևորել վեճը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին ընդդատյա չլինելու և վեճը որևէ դատարանին ենթակա չլինելու հարցում, տարբերակված կերպով կարգավորելով նաև դրանցից բխող դատավարական հետևանքները (մի դեպքում սահմանելով վերահասցեագրման, մյուս դեպքում՝ գործի վարույթի կարճման հնարավորություն)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսել է մեկ ընդհանուր դատավարական հետևանք՝ գործի վարույթի կարճում:

Քննարկելով վարչական և քաղաքացիական դատավարությունում առարկայական ընդդատության կանոնների խախտման հետևանքների տարբերությունը և վերահասցեագրման ինստիտուտի դերը դատական պաշտպանության իրավունքի իրացման

հարցում՝ այդուհանդերձ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն խնդիրները, որոնք կարող են ծագել քաղաքացիական դատավարությունում այս ինստիտուտի ներդրմամբ՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով հայցադիմումին ներկայացվող պահանջները տարբերվում են, ուստի պահանջը վարչական դատարանին վերահասցեագրելու դեպքում գործը կմտնի փակուղի, քանի որ պարզ չեն հայցադիմումը թերություններով ներկայացված լինելու դեպքում վրա հասնող հետևանքները (օրինակ, եթե հայցադիմումին ի սկզբանե չեն կցվել վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ փաստաթղթեր, որը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով հայցադիմումին ներկայացվող պարտադիր պահանջ է).

2) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված են վարչական հայցի ներկայացման հստակ ժամկետներ, որոնք բացակայում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ուստի պահանջը վարչական դատարանին վերահասցեագրելու դեպքում ծագում է վարչական հայցին ներկայացվող ժամկետների հաշվարկման խնդիր.

3) հայցի ապահովման կիրառման կառուցակարգերը տարբերվում են քաղաքացիական և վարչական դատավարություններում: Այսպես, վիճարկման հայց ներկայացված լինելու դեպքում հայցի ապահովում չի կիրառվում, սակայն վիճարկման հայցը վարույթ ընդունվելու դեպքում վարչական ակտի կատարումը, որպես կանոն, կասեցվում է.

4) ընդհանուր իրավասության դատարանին պարտադիր վերահասցեագրման լիազորությամբ օժտելը նրան կարող է անհարկի ծանրաբեռնել տարատեսակ անորոշ կամ հստակ ձևակերպված, բայց նրան ոչ ենթակա պահանջներով:

Ի հավելումն նշված խնդիրների՝ հարկ է արձանագրել, որ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարության ցանկացած փուլում ներկայացված պահանջը վերահասցեագրելու ինստիտուտի կիրառման դրական և բացասական կողմերը դեռևս լրիվ բացահայտված չեն, իսկ վերահասցեագրման դեպքերը փոքր թիվ են կազմում՝ կապված լինելով վեճի՝ հանրային և մասնավոր իրավահարաբերությունից բխելու հանգամանքի հետ, հարցը, որպես կանոն, լուծվել է Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշմամբ:

Վերոշարադրյալի արդյունքում հարկ է նշել, որ նախագծով առաջարկվող լուծումները հաշվի չեն առնում վարչական և քաղաքացիական դատավարությունների առանձնահատկությունները, հայցատեսակների, հայց ներկայացնելու ժամկետների, հայցի

ապահովման, հայցադիմումին ներկայացվող պահանջների առկա տարբերությունները և դրանցից բխող տարբեր հետևանքները, ինչպես նաև վերահասցեագրման ինստիտուտի կիրառման պրակտիկան: Առաջարկի կարգավորման պայմաններում վերոշարադրյալ խնդիրները մնում են չլուծված, ինչը կարող է անհարկի ծանրաբեռնել ընդհանուր իրավասության դատարանին՝ չհանդիսանալով դատական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման երաշխիք: Ուստի, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենքի նախագծով փոփոխվող հոդվածները թողնել անփոփոխ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2018 թվականի N 1366 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-367-12.09.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 16
Երևան

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-367-12.09.2018-ՊԻՄԻ-011/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 25-րդ հոդվածում ավելացնել նոր 3.1-րդ մաս.

«3.1 Դատարանը գործը հանձնում է վարչական դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության վարչական դատարանում:»

***Հոդված 2.*** Օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:»

***Հոդված 3.*** Օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում «ընդդատությունը» բառից հետո ավելացնել «կամ ենթակայությունը» բառերը:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կարգով» բառից հետո ավելացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված դեպքերի).» բառերը :

***Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## Հիմնավորում

### 1. Առկա խնդիրները

Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրվում է, որ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը բացառությամբ ՀՀ վարչական դատարանի կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով այն դեպքերի համար, երբ գործը քննելիս պարզվում է, որ գործը ենթակա է քննության սնանկության դատարանում, ամրագրվում է գործը սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին դրույթ:

Այն դեպքերի համար, երբ գործը քննելիս պարզվում է, որ գործը ենթակա է քննության վարչական դատարանում, Օրենսգրքով հայցադիմումի վերահասցեագրման դրույթ չի նախատեսվում:

Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթով այն դեպքում, երբ որեւէ քննության ընթացքում պարզվում է, որ գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով, դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը:

Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտ: Հայցադիմումը վերահասցեագրելը սահմանվում է որպես վարչական դատարանի պարտականություն. վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության: Այսպիսով վարչական դատարանը պարտավոր է պարզել արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե ոչ, եւ գործը վարչական դատարանին ընդդատյա չլինելու պարագայում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը:

Միեւնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը կարգավորել է նաեւ այն դեպքը, երբ վեճը ենթակա չէ որեւէ դատարանում քննության: Մասնավորապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ որեւէ դատարանում քննության: «Որեւէ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրն ի նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ ՀՀ-ում գործող ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների քննությանը եւ լուծմանը:

Փաստորեն, ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, որը տարբերակված մոտեցում է դրսեւորել վեճը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չլինելու եւ վեճը որեւէ դատարանին ենթակա չլինելու հարցում, տարբերակված կերպով կարգավորելով նաեւ դրանցից բխող դատավարական հետեւանքները /մի դեպքում սահմանելով վերահասցեագրման, մյուս դեպքում՝ գործի վարույթի կարճման հնարավորություն/, եւ վեճն ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չլինելու, եւ ընդհանրապես որեւէ դատարանին ենթակա չլինելու պարագայում Օրենսգիրքը նախատեսել է մեկ ընդհանուր դատավարական հետեւանք՝ գործի վարույթի կարճում՝ հոդված 182:

Բացի դրանից Օրենսգրքի 26-րդ հոդվածը վերնագրված է «Ընդդատության եւ ենթակայության մասին վեճերը», սակայն հոդվածի բովանդակության մեջ չի դիտարկվում սնանկության դատարանի ենթակայության գործերի վերահասցեագրման հետ կապված վեճերը:

### 2. Առաջարկվող կարգավորումը

Ա) Առաջարկում ենք վերացնել օրենքի բացը եւ այն դեպքերի համար, երբ գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության վարչական դատարանում, նախատեսել այն վարչական դատարանի քննությանը հանձնելու մասին դրույթ:

Բ) Օրենսգրքի 26-րդ հոդվածում սահմանել նաեւ ըստ ենթակայության վեճերը:

Գ) Օրենսգրքի 182-րդ հոդվածում սահմանել գործի վարույթը չկարճելու բացառությունները, երբ գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

**3. Ակնկալվող արդյունքները**

Նախագծի ընդունման արդյունքում օրենքով կկարգավորվի ՀՀ վարչական դատարանի իրավասությանը վերապահված առարկայական ընդդատության գործերի հանձնումը վարչական դատարանին, ինչն էլ կնպաստի անձանց իրավունքների եւ ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովմանը եւ գործի ողջամիտ ժամկետում քննության սկզբունքների իրացմանը: